

17299

891.99  
U-41

1912

# 2003

391.542-32

0-41

Առաջնակ

№ ————— 2

ԵՐԵՒ  
ՊԱՏԿԵՐ

891.99

U-41

ԱՆԴՐԻԱՆԻ

354

ԿԱ  
Ա 646

ՎԱՂՈՒՅՑ, ՏԱՏ ՎԱՂՈՒՅՑ...

34034

## ԲՆՈՒԹԵԱՆ ԽԱՂԸ

## ՆՈՐ ՈՒԽՏԱՏԵՂԻՆ

(Մեծ Շիրիմի Առնչա)



ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԵՐՄԵՆ» Գլաֆոկայեա փող. 6.

1912

3774

ՎԱՂՈՒՑ, ՇԱՏ

ՎԱՂՈՒՑ...



## ՎԵՐՈԻՑ, ՇԱՏ ՎԵՐՈԻՑ...

Վաղուց, շատ վաղուց է, ես մինչև  
անգամ չեմ յիշում, թէ այդ երբ էր.  
Միայն ամեն անգամ, երբ ես անց-  
նում եմ այդ ժողովարանի մօտով, միշտ  
քեզ եմ յիշում։ Յիշում եմ, որ շաբաթ  
երեկոյ էր և այդ ժողովարանում մեծ  
հանդէս կար, բայց չեմ յիշում, ինչի  
առթիւ էր այդ մեծ հանդէսը...

Պարահանդիսի ահազին, հարուստ  
դահլիճը, էլեկտրական լոյսով շքեղ լու-  
սաւորւած էր, հասարակութիւնը դալիս  
էր ու գալիս. անվերջ...

Հազարաւոր մտքեր, հազարաւոր

զգացմունքներ, իրար էին խառնւել պարհանանդիսի այդ մեծ դահլիճում... իրաքանչիւրն աշխատում էր ինքը նըկատւի, ինքը երևայ...

Չանձրալի... Տաղտկալի էր...

Ես վճռեցի հեռանալ: Արագ քայլերով իջայ աստիճաններով, դիմեցի դէպի դուռը, որը յանկարծ բացւեց իմ առաջ և դու ներս եկար. Ես կանգ առայ: Այդտեղ առաջին անգամ մեր հայցըները իրար հանդիպեցին. քեզ հետուրիշ մարդիկ էլ կային, չը գիտեմ ովքեր էին, ես նրանց չը տեսայ: Ես քեզ էի նայում ակնդէտ, քեզնով հիացած...

Ես մնացել էի տեղումս քարացած. Ես քեզ չէի ճանաչում, ծանօթ չէի, բայց ինձ թւաց, որ քեզ շատ եմ պատահել, տեսել... Միայն վաղուց, շատ վաղուց, ես չէի յիշում թէ երբ... Դու էլ ինձ նկատեցիր, մեղմ ժպտացիր, ապա անցար իմ մօտով ու աստիճաններով բարձրացար դէպի մեծ դահլիճը...

Ես բոլորովին մոռացայ, որ տուն էի ուղում գնալ. վազելով բարձրացայ աստիճաններով ու մտայ մեծ դահլիճը...

Քեզ շրջապատել էին ծանօթներդ, նըրանց մէջ ես նկատեցի Լևոնին, նա քոմօտ ծանօթն է եղել, ես այդ յետոյ իմացայ երբ նրան տեսայ քեզ հետ, ես շատ ուրախացայ. Լեռնը իմ լաւ բարեկամն է. թէև հարուստ է, շատ:

Ինչ լաւ, հետաքրքիր էր այդ մեծ դահլիճը...

Ես զարմանում էի ինձ վրայ, թէ ինչպէս մի քանի րոպէ առաջ կարող էի մտածել, այդ հետաքրքիր պարահանդիսից հեռանալու մասին...

Քեզ հետեւելու մասին, ես ի հարկէ, բոլորովին էլ չէի մտածում:

Իմ ինչ գործն է, որ դու եկել ես այդ պարահանդէսը, բացի քեզ ուրիշ հագարաւոր մարդիկ էլ էին եկել. մենակ հօ դու չէիր, դու ով ես ինձ համար, ես քեզ չեմ էլ ճանաչում...

Ես միայն ցաւում էի, որ մի քանի ժամից յետոյ, պէտք է վերջանար այդ հետաքրքիր պարահանդէսը...

Բոլորն էլ զբունում էին այդ շքեղ դահլիճներում, դու էլ էիր զբունում, ինչու ուրեմն ես չը պիտի զբունէի. Ես

էլ էի զքօննում... իսկ եթէ դու հետ  
նայելով, շարունակ ինձ էիր տեսնում,  
այդ միայն պատահմամբ էր, որ ես  
միշտ քեզ մօտ էի լինում...

ի հարկէ, միայն պատահմամբ...

իսկ երբ Լևոնը մեզ ծանօթացրեց,  
ես դողալով մեկնեցի ձեռքս ու ստրու-  
կի նման խոնարհւեցի քո առաջ... Աչ-  
քերս գետնին էի յառել ու չէի հա-  
մարձակւում քեզ նայել... Դու առա-  
ջինը սկսեցիր խօսել...

Ինչ լաւ էր այն ժամանակ... Ինչ  
լաւ...

Երբ մենք մնացինք առանձին, ես  
չը գիտէի ինչ անել, զգացմունքները  
խեղդում էին ինձ, անկարող էի մի բառ  
անգամ արտասանել. ես ինձ այնպէս  
երջանիկ էի զգում... Ինչ լաւ էր այն  
ժամանակ...

Իսկ յետոյ երբ ես աչքերս զգու-  
շութեամբ բարձրացրի ու նայեցի քեզ,  
դու մեղմ ժպտացիր, աչքերդ խոնար-  
հեցրիր, ապա կրկին ինձ նայելով, նո-  
րից ժպտացիր... Ես աւելի և աւելի էի  
շփոթւում, ես չըգիտէի, թէ ինչո՞ւ հա-

մար էիր դու այդքան շատ ժպտում...  
բայց ինձ հաճելի էր, որ դու ժպտում  
էիր ինձ թւում էր, որ դու էլ ինձ նման  
շփոթւում, քեզ կողցնում, երջանիկ ես...

Ես ուզում էի քեզ ասել, որ... Բայց  
հէնց այդ բոպէին մօտեցաւ քեզ ակնո-  
ցաւոր մի պարոն, դու վերցրիր նրա  
թևը, մի խորհրդաւոր հայեցք նետելով  
ինձ, հեռացար առանց ձեռք տալու...

Աչքերս գետնին յառած, ես մնացել  
էի կանգնած, երբ յանկարծ նկատեցի,  
որ աջ ոտիս կոշիկը երկու կարկատան  
ունէր: Զգւանքով աչքերս դարձրի այդ  
կարկատաններից.

Ես զգում էի, որ նրանք այդ բոպէ-  
ին իմ վտանգաւոր թշնամիներն էին...  
Հազար ու մի մտածութիւններ անցան  
իմ գլխով...

Յանկարծ ինձ թւաց, որ դու այդ  
կարկատանների վրայ էիր ծիծաղում...  
Ես ինձ այնպէս վատ զգացի. բարկու-  
թիւն, զայրոյթ, արդարանալու պա-  
հանջը իմ մէջ խառնեցին իրար: Ես  
ուզում էի վագել քո յետեկից, ուզում  
էի զոռալ, ասել, որ ես բոլորովին մե-

ղաւոր չեմ, եթէ հարուստ չեմ և ստիպւած եմ կարկատաններով կոշիկներ հագնել... Բայց յանկարծ յիշեցի, որ ես էլ կարող եմ առանց կարկատանների կոշիկներ հազնել—Այս, այս...

Այս, վաղը, անպայման վաղը, ես կը ծախեմ իմ ժամացոյցը. Ի՞նչ, նույն է, թանգագին յիշատակ. Թող գըովը տանի բոլոր յիշատակները. Ինձ հարկաւոր են նոր կոշիկներ և ոչ յիշատակներ. Ես հօչեմ կարող այսպիսի անպիտան կոշիկներով մաս գալ և մինչև անդամ պարահանդէս... Այս, այս, ի հարկէ ծիծաղելի եմ, որու իրաւունք ունէիր իմ կարկատած կոշիկների վրայ ծիծաղելու, հաւատան, որ ես բոլորովին էլ քեզ չեմ մեղադրում... Բայց վաղը ես կը գնեմ, նոր, ամենամոր ձեմ կոշիկներ, այ, ճիշտ այնպիսի, ինչպիսին հագել էր այն ակնոցաւոր պարոնը, որի թևը դու առաջ ու առանց ինձ ձեռք տալու հետաքար...

Այս մտածութիւնների մէջ էի, երբ յանկարծ էլեքտրական լոյսը հանգցրին և իսկոյն նորից վառեցին: Դա, ցըւելու

առաջին նշաններ: Միւս սենեակներում ու դահլիճններում միայն կէս լոյս էր թողած:

Ես քեզ որոնում էի ամեն տեղ. մի անգամ էլ քեզ տեսնելու ցանկութիւնը կրակ դարձած բոնկել էր հոգիս:

Մեծ դահլիճում դու չը կայիր. անցայ երկրորդ դահլիճը, այստեղ էլ չըկայիր: Անյաջողութեան երկիւղը ըսկըսեց ինձ պատել: Գժի նման ես անցայ բուփէտ, ապա երրորդ դահլիճ, նախասենեակ, ընթերցարան և քեզ ոչ մի տեղ չըգտայ, որու ոչ մի տեղ չըկայիր: Ես դողում էի ամբողջ մարմնով, քեզ չըգտնելու ու ուրականը կրծում էր հոգիս:

Որոշեցի նորից նայել մեծ դահլիճը:

Ընթերցարանի կողքի սենեակով կարելի էր իսկոյն մեծ դահլիճ անցնել: Հեալով ու դողալով ես սկսեցի վագել դէպ մեծ դահլիճը, երբ յանկարծ այդտեղ, այդ կիսալոյս սենեակում քեզնկատեցի...

Ապշած մնացել էի տեղումն արձանացած...

Հայելու առաջ դու քո մազերն էիր

ուղղում իսկ ակնոցաւոր պարոնը քո  
յետել կանգնած, կարճ-կարճ համբոյր-  
ներ էր դրոշմում քո մերկ վզին: Այս  
բոլորը ես տեսայ շատ պարզ, իմ երկու  
այն աչքերով, որոնք մի ժամ դրանից  
առաջ չէին համարձակում քեզ նայել  
ու խոնարհութեամբ գետնին էին յառ-  
ւել...Դրանից յետոյ ես տեսայ ինչպէս  
դու շուռ եկար, երկու կատակի ապ-  
տակներ նւիրեցիր ակնոցաւոր պարո-  
նին, որից յետոյ ձեր շրթունքները միա-  
ցան... Երկար,... Երկար...

Ես շնչառպառ քարացել էի ու չը  
գիտէի ինչ անել:  
Դուք ինձ չը նկատեցիք և երկուսդ  
էլ շինծու աղմուկ-ծիծաղով անցաք  
մեծ զահլիճը...Հասարակութեան մէջ...  
Այդտեղ ես վճռեցի, այդ բանը քեզ  
երբէք չը ներել և անպայման վրէժ-  
ինդիր լինել: Այս, վճռած է: Գիտցիր  
և դու, իմ գեղեցիկ ժամացոյցը վաղը  
ես չեմ ծախի և ակնոցաւոր պարոնի  
կոշիկների նման կոշիկներ, ես այլ ևս  
երբէք, երբէք չեմ հագնի:

## ԲՆՈՒԹԵԱՆ ԽԱՂԱ





## ԲՆՈՒԹԵԱՆ ԽԱՂԸ

Մայրաքաղաքը, համալսարանը, ուսանողական կեանքը, կրկնապատիկ նըրանց երջանիկ էին դարձրել:

Թւում էր, ոչ ոք և ոչինչ այլևս չէր կարող նրանց երջանկութիւնը խանգարել։ Այսպէս ամութ, կապուած էին նրանք...

Տանջանքի այնքան խիստ ծանր օրեր, համբերել էին նրանք այսօրուան համար։ Երբ վերջապէս միացած յաւիտեան, վայելեն պիտի երջանկութիւնն իրանց...

Եւ այսօր իրանց նպատակին հասած՝ օրհնում էին անվերջ սէրն ամենակարող...

«Ինչ լաւ է կեանքը, ժորժ, ինչ  
լաւ...» կրկնում էր Էմման ամեն օր  
անդադար...

Անցնում էին օրեր, ամիսներ և  
կեանքը քաղցր, աւելի երջանիկ էր թշ-  
ռում Էմմային:

Էմման չէր բարկանում, եթէ շատ  
ուշ գիշերին գալիս էր ժորժը յոզնած,  
ուժասպառ ու շատ յաճախ, առանց  
խօսելու, խոր քուն էր մտնում...

Այդ ժամանակ էլ իրան երջանիկ էր  
զգում գեղեցիկ էմման, որպէս դիցուհի  
հէքիաթային աշխարհի, նա հսկում էր,  
որ հանգիստ բնանայ ժորժն իր սիրած...

Ինչու էր ժորժն այդքան ուշ տուն  
վերադառնում, ինչու վերջերս այդքան  
փոխուած, անխօս է դառել... Երբէք  
չէր հարցնում ինքն իրեն էմման: Եւ  
երբէք, երբէք նա չէր կասկածում...

Այնպէս խորը նա սիրում ու հաւա-  
տում էր նրան...

Իսկ ժորժը հեռանում, գնում էր  
անդարձ...

Բարձր շրջանի օրիորդներ ու տիկին-  
ներ, աղամանդեայ ճիթեր, մախմուր  
ու թաւիշ, ոսկեզօծ կարասիք, գեղեցիկ  
ձիաներ, նրան կախարդել, խելառ էին  
դարձրել...

Ամեն անգամ նա այդ սալոններում  
յիշում էր իր զզուելի բնակարանը աղ-  
քատիկ, և նրանց մէջ... էմման...

Էմման... Այո, այո, էմման...

Բայց ոչ, ժորժը անազնիւ չէ, նա չի  
ուզում անազնիւ լինել. նա չի մոռա-  
ցել էմմային. ոչ, նա միշտ էլ յիշում  
է նրան, խղճում, սիրում, բայց...

բայց...

Աղամանդեայ ճիթեր, մախմուր ու  
թաւիշ նրան կախարդել, խելառ են  
դարձրել...

Օրեր ամիսներ անցնում էին գնում  
և ժորժը նրանց հետ հեռանում էմմա-  
յից, գնում էր անդարձ...

Վերջին քննութիւններն են: Կրկին  
մէկ ամիս և ժորժը վերջապէս, այս-  
քան երկար տարիներից յետ կըդառ-  
նայ բժիշկ:

Ուրախ, աշխայժ, խօսակցում էր նը-  
ւագում, կատակում էր ու ծիծաղում:

Տիկիններ ու օրիօրդներ հաճոքից  
թուլանում...

Ցնծում է Ժորժը:

Նա այլս չէ յիշում իր զզուելի բը-  
նակարանն աղքատիկ, և նրանց մէջ,  
իր սիրած փայփայած նախկին դիցու-  
հի, սիրուն էմմային...

Էմմա... Այո... Բայց ուր է նաև այժմ  
վաղուց, շատ վաղուց է, որ չէր պա-  
տահում նրան այլս: Դուցէ այս քա-  
ղաքից նա հեռացել, իր ծնողների  
մօտ է գնացել... գուցէ... ով գիտէ...

Այդ բոլոր անցեալը թւում էր Ժոր-  
ժին մի մարած երազ, մի հին մելո-  
դիա, որ այլս երբէք, երբէք չէր կրկնւի..

Ամսի 22-ի առաւօտն էր, գեղեցիկ  
կառքը հսկայ շինութեան տուած կանգ  
տուաւ: Դուրս եկաւ կառքից Ժորժը  
փայլելով համալսարան մտաւ.

Վերջին քննութիւնն էր՝ «Судебная ме-  
дицина» անսպասելի յաջող անցել էին  
բոլոր քննութիւնները. այսօր վերջինն

է մի քանի ժամ միայն և Ժորժը բը-  
ժիշկ է դիպլոմով:

Սկսեց քննութիւնը: Պրոֆեսորի  
իւրաքանչիւր հարցին պատասխանում  
է Ժորժը առանց կանգ առնելու. այս-  
տեղ էլ բախտը ժպտում է նրան, եր-  
ջանիկ զգում, ահա այս քննութիւնն  
էլ անցաւ փայլուն, անսպասելի յաջող:  
Գոհ է պրօֆեսորը, անչափ շնորհա-  
կալ: Անդամահատութեան էլի մի հարց  
և քննութիւնն ամբողջովին վերջացած  
էր համարւում:

Հաստատ քայլերով մօտեցաւ Ժորժը,  
դանիակը վերցրեց, դիմեց դիակին և...  
Եւ սարսափած մնաց քարացած... Այս  
հարցին պատասխանել նա անկարող  
եղաւ. թուլացաւ ձեռքը, ընկաւ դա-  
նակը:

Մեռած անցեալն էր կենդանացել,  
մարած երազներ էին, կրկնւում, տան-  
ջանքի մելօդիան էր հնչում...

Դեեր ու ճիւաղներ քրքջում էին ու  
հոհուում, հէ, հէ, հէ... հա, հա, հա...

Բնութեան խաղն էր դա անզօր մար-

դու հետ. բաղդի վրէժն էր, ճակատա-  
պրի ծաղրն ու ծիծաղը...

Սեղանի վրայ անշարժ ընկածը, էմ-  
մայի դիակն էր, որ իր բաց աչքերն  
ժողժին էր նայում...



## ՆՈՐ ՈՒԽՏԱՏԵՂԻՆ



## ՆՈՐ ՈՒԽՏԱՏԵՂԻՆ

Մեծ շիրմին առաջ

Մի քանի տասնեակ տանջանքի տարիներ ապրեց նա այս զագիր աշխարհում:

Ապրեց ու սաեղծագործեց:  
Նա ստեղծագործեց մարդկութեան համար, որին սիրում էր իր սրահի խորքից:

Նա սիրեց մարդուն:  
Բայց մարդը կոպիտ, կեղծ ու զաղիր՝ նրա վեհ սէրը չհասկացաւ,  
Դաւաճանեց նրան.

Սակայն նրա սիրոյ վառ ճրագը հանգցնել չկարողացաւ և ամբողջ մարդկութիւնը:

Նա խորը սիրեց մարդուն:  
Սուրբ գիրքը ձեռին՝ սէր էր քարո-  
դում և մի նոր կեանքի հրաւէր կար-  
դում...

Դէպի վեր էր կանչում...

Բայց մարդը կոպիտ, զաղիր, դա-  
ւաճան, մարդկութեան թշնամի յայ-  
տարեց նրան:

Անիծեց ու անաստուած հոչակեց...

Բայց վառ արեգակ, և յոյս, և հա-  
ւատ ծերուկի հոգում միշտ մնաց կեն-  
դանի:

Եւ խղճաց մարդուն...

Տանջանքի երկար տարիների իր  
աշխատանքը ողջ տուեց մարդուն,  
նուիրեց մարդկութեան:

Մարդը վայելեց...

Իսկ ստեղծագործողը մեծ խռով ու  
անհանդիւտ դժգոհ իրանից, քայլում  
էր մաազբաղ...

Զըկւել էր քնից...

Եւ երբ հանգիւտ ու անդորը զիշե-  
րուայ ժամին, խաղաղ քուն մտած, նիր-  
հում էր մարդկութիւնը... Նայեց ծե-  
րունին իր չորս բոլոր խաւար:

Հառաչեց ծերունին...

Եւ գնում էր ծերունին մթութեան  
ժամին, ոլոր ու մոլոր նեղ ճամբանե-  
րով, մէջ կէսգիշերին:

Գնում էր փնտոելու կեանքը գեղե-  
ցիկ, հեռու այս աշխարհից, բարձունք-  
ներում սիրուն:

Սիրում էր մարդուն.

Արև էր ուզում...

Գնում էր ծերունին միայնակ ու  
խոժոռ, երբէք չէր նայում յետ.

Գնում էր լեռները...

Գնում էր անդարձ...

Երբ լեռան բարձունքին հասաւ ծե-  
րունին, յանկարծ այս աշխարում աղ-  
մուկ բալճացաւ.

Աղմուկ բարձրացաւ մարդկութիւնը  
արթնացաւ...

Հասկացան մարդուն:

Բայց չկար այլ ևս մարդն այս աշ-  
խարհում. այս աշխարհում, ուր այնպէս  
խորը սիրեց նա մարդուն և տանջուեց,  
նրան սիրելու համար...

Փառքը ծերունու բևեռից-բևեռ թըն-  
դում էր ուժգին, իսկ ծերունին տխուր,  
մուայլ ու դժգոհ լեռան կատարին, ա-  
րեւին չհասած լնկած էր ուժասպառ...

Նա լաց էր լինում սրտի մոմուռով  
ու ջերմ արցունքները անթիւ կաթիլ-  
ներով հոսում էին աչքերից...

Եւ մի գիշերում նրա ջերմ արցունք-  
ներից, անյայտ հովտի մէջ ադաման-  
դեայ մի լեառ բարձրացաւ...

Այնքան նա լացեց...

Նոր արշալոյաը առաջինը ողջունեց  
ադամանդեայ լեռան և նրա այնքան  
փնտուած, սիրուն, արեը զարկում էր  
լեռան, արտացոլում ու լոյս տարածում  
խաւար աշխարհում...

Ծերուկի փառքը բևեռից-բևեռ թըն-  
դում էր ուժգին...

Եւ բոլոր աշխարհներից, և բոլոր  
կողմերից գնում էին մարդիկ նրան  
փնտոելու... Բայց նա չկար:

Այս աշխարհում ոչ մի տեղ չկար.  
այս աշխարհում չըգտաւ և ոչ մի տեղ  
ծերուկը իր համար...

Նա խորը սիրեց մարդուն, բայց  
թողեց աշխարհը...

Եւ աշխարհին թողեց իր ջերմ ար-  
ցունքները. իսկ այդ արցունքները ա-  
դամանդ դառնալով մեծ ու լուսեղէն  
լեառը բարձրացրին...


Իսկ այդ լեառը, որպէս կենդանի  
վկայ, միշտ մեզ յիշեցնում է վեհ ծե-  
րուկին, նրա խոր սէրը ու նրա ձգտած  
ու փնտուած նոր կեանքը...

Եւ մենք մինչև այսօր էլ գնում ենք  
անվերջ այդ ուխտատեղին, անձայն ու  
անխօս գլուխ խոնարհում, նրան երկր-  
պագում...

Ապա վերադառնում և աշխարհին  
աւետում մի նոր լուսաբաց...









Lոյս է տեսել՝

Առանց վերնագրի № 1 . . . . .	5 կ.
Կեանքի ձանկերում (Տ. Լ.) . . . . .	5 կ.
Ձրդուսի—պատկերներ նրա կեանքից . . .	7 կ.
Երեք պատկեր № 2 . . . . .	5 կ.

ԳԻՆԸ 5 ԿՈՊ.

17299

2013

